ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. մարտի 26-ից - ապրիլի 9-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Պեկին) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ՝**
   Հրաչյա Ենոքյան՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության թռիչքների թույլտվությունների բաժնի մասնագետ

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Պեկին), 2025թ. մարտի 26-ից ապրիլի 9-ը

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ՝**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Չինաստանի կառավարություն

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝**
   Մասնակցություն «Օդային շտահագործման կառավարում, Գոտի և ճանապարհ նախաձեռնության գործընկերներ երկրների համար» խորագրով դասընթացին:

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Գործուղման ընթացքում քննարկվել են Չինաստանի քաղաքացիական ավիացիայի ներկա իրավիճակը, այդ ոլորտում Չինաստանի ձեռքբերումները, չինական ավիաընկերությունների երթուղիների ընդլայնումը, ավիացիոն անվտանգության մակարդակը, COVID-19-ի ազդեցությունը ավիացիոն արդյունաբերության վրա, ինչպես նաև «Խելացի օդանավակայաններ»-ին ներկայացվող նորարարական պահանջները:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Դասընթացի շրջանակում կայացել են դասախոսություններ՝ նվիրված ոչ միայն քաղաքացիական ավիացիայի նվաճումներին, զարգացմանը և մարտահրավերներին, այլև Չինաստանի մշակույթին: Կազմակերպվել են այցեր Ծիանջին (Tianjin) և Շանհայ (Shangai) քաղաքներ, որտեղ ներկայացվել են FEIMA ROBOTICS ընկերության դրոնները, նրանց տեխնիկական տվյալները, գործնականում դրանց կիրառումը: Ցուցադրվել են նաև COMAC օդանավերի

արտադրական գործընթացները: Այց է կազմակերպվել «AVIC International Holding Corporation», որտեղ չինական կողմը ներկայացրել է ընկերության պատմությունը և գործառույթները:

7. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ՝**

Սեմինարի ավարտին մասնակիցներին տրվել են վկայականներ:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ ապահովելու սույն դասընթացի շարունակականությունը:

9. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՄՍԱԹԻՎԸ՝**

Հրայր Ենոքյան

14 ԱՊՐԻԼ 2025թ.